## ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

# ԱՌԱՔԵԼՈՑ ԿԱՄ ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔ

*ՊԱՏՄԱԿԱՆ. — Ըստ աւանդութեան, Առաքելոց Վանքը հիմնած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Տիրինկատար կոչուած Անտառական մեհեանին տեղ, անդ զետեղելով Պետրոս, Պօղոս և Անդրէաս Առաքեալներու մասունքները. — Ալիշան, Հայապատում, էջ 98։*

*Ս. Գր. Լուսաւորչի կողմէ Առաքելոց Վանքին վանահայր կը կարգուի Զենոբ Գլակի եղբայրը՝ Ղազար, որուն անունով վանքը կը կոչուի Ղազարու Վանք։*

*«Աստ կը հանգչին որոշ հանգստարաններու մէջ յիշատակարաններով և մահարձաններով մեր երանելի Թարգմանիչ Վարդապետներէն շատեր, Մովսէս Խորենացի, Դաւիթ Անյաղթ, Մամբրէ Վերծանող, և այլն». — Եղիշէ Եպս. Չիլինկիրեան, Յիշատակներ, 1925, էջ 54։ — Այս պատճառաւ երբեմն այս վանքը կը կոչուէր նաև Թարգմանչաց Վանք անունով։*

*Տարօնի իշխան Զորաւանէլ Մամիկոնեան, 1104 թուին, իր ծննդավայր Բերդակ գիւղը կը նուիրէ Առաքելոց Վանքին, յատուկ պարգեւագիր յիշատակարանով. — Հայապատում, էջ 396։ Յովսէփեան, Յիշատակարանք Ձեռագրաց, Անթիլիաս, էջ 287։*

*Առաքելոց Վանքի Առաջնորդներէն ծանօթ են հետևեալները.*

1. — **Պօղոս Վրդ. Տարօնեցի**, 1101-1123, *կոչուած «Մեծ հռետոր Հայոց», ունի դաւանաբանական և ծիսագիտական գրուածքներ։ Կը վախճանի 1123ին և կը թաղուի անդ։*

2. — **Աբրահամ Վանահայր**, 1204. *ջանադիր կ'ըլլայ նշանաւոր Տօնականին վերագրման, մասնակցութեամբ բազմաթիւ միաբաններու և բարեպաշտներու. — Հայապատում, էջ 450։ Յիշտ. Ձեռագրաց, էջ 719։*

3. — **Բարսեղ Վանահայր**, *պաշտօն վարած է 1204էն առաջ. — Յիշտ. Ձեռագրաց, էջ 715, 721։*

4. — **Ներսէս Վրդ. Տարօնեցի**, 1271-9. — *Գ. Արք. Յովսէփեան, Խաղբակեանք, Բ., էջ 194-5։*

5. — **Տէր Թադէոս Առաջնորդ**, 1314. — *Լ. Ս. Խաչիկեան, Յիշատակարանք ԺԴ. Դարի, Երեւան, էջ 105։*

6. — **Տէր Յովհաննէս Առաջնորդ**, 1339. — *Ե. Լալայեան, Ցուցակ Ձեռ. Վասպուրականի, էջ 201։ Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 321։*

*Այլազգիները կ'աւերեն վանքը 1371 թուին, և կրօնաւորները կը ցրուին ուրիշ գաւառներ. — Հայապատում, էջ 548։*

7. — **Պօղոս Արքեպիսկոպոս**, 1439. *Մուշի ամիրան կը կողոպտէ վանքը. — Հայապատում, էջ 549։*

8. — **Թադէոս Արքեպիսկոպոս**, 1540, *կը նորոգէ Առաքելոց Տաճարի մեծ գմբէթը. — Գ. Սրուանձտեանց, Թ. Աղբար, Բ., էջ 422։*

9. — **Բարսեղ Եպս. Մարմանդցի, Դաւանցի, Արծունեցի**, 1601-1637, *որդի Ապուհարի և Եղիշիի, աշակերտ և հոգևոր որդի Ոսկահայեցի Սրապիոն կաթողիկոսի։ Վանքին մէջ նորոգութիւններ կատարած է 1607ին. — Հանդ. Ամս. 1956, էջ 417 հ.։*

10. — **Յովհաննէս Եպիսկոպոս**, 1637-66։ *Վանքին քայքայուած գիրքերը նորոգել կու տայ. — Հանդ. Ամս. 1956, էջ 419, 422։ Հայապատում, էջ 550։*

11. — **Դաւիթ Վարդապետ**, 1671. — *Հ. Հ. Ոսկեան, Վասպուրականի Վանքերը, Գ., էջ 1007։*

12. — **Գասպար Վարդապետ**, 1755. — *Թ. Աղբար, Բ., էջ 488։*

13. — **Յովհաննէս Վրդ. Ապտալեան**, *Արանցի*, 1794-1839. — *Կը նորոգէ վանքը և գիզուած պարտքերը կը վճարէ։ Իրեն կը գործակցին հին միաբաններ, Խաչատուր*

---

Եւ կամ յո՞ր ըղձական դիւրութիւն ձեռն
համբարձից:
Զի եթէ ի ձեղուն բարձրութեան երկնի,
Անտի անձրեւեաց հուրն Սոդոմայ ...
Իսկ եթէ ի յատակ խորութեան երկրի,
Սա եբաց զկոկորդն ըմբռնողական
Եւ եկուլ զԴաթան բանակօքն Աբիրոնի:

**(Նան Եղ. — Գ.)**

*(Շարունակելի՝ 8)* *Մ. ՄԿՐԵԱՆ*

digitised by A.R.A.R.@

Վրդ. Վանեցի, Գրիգոր Վրդ. Պոլսեցի, Յարութիւն Վրդ. Արղնցի, Ղազար Վրդ. Մոզուցի և Կիրակոս Վրդ. Դէրգեվանցի. — Թ. Աղբար, Բ., էջ 486–8։

14. — Յովհաննէս Ծ. Վրդ. Մուրատեան, 1874–1899. — Գ. Վ. Սրուանձտեանց, Հնոց և Նորոց, էջ 28–9։ Եղիշէ Եպս. Չիլինկիրեան, Յիշատակներ, էջ 54։

Յովհաննէս Վարդապետի կողմէ երբեմնի անտեսուած ձեռագիրներուն վերաբերմամբ ցոյց տրուած հոգածութիւնը կը յիշատակէ Գ. Վրդ. Սրուանձտեանց. «Երբ նախ քան զքսան ամ ունէր Առաքելոց Վանքն ոչ սակաւ ձեռագիրս զետեղեալ յարկեղս և եդեալ ի խորանին որ առընթեր Աւագ Տաճարին յաջմէ կուսէ. բայց այնքան անայցելու թողեալ էին զայնոսիկ, և անհոգ ըզգանեաց նորին, մինչև յամս քանիս ի ձիւնոյ և յանձրևոյ ծածկեալ ձեղուն, և ձիւնք և շաղախ թափեալ ի վերայ և ի մէջ արկեղցն, ապականեալ էր և փչացուցեալ զբազումս։ Զարդիս Նոր Վանահայրն Արժ. Յովհաննէս Վարդապետ Մուրատեանն, խընամ ունի վասն մնացելոցն, և հոգայ զշինութիւն սուրբ տանն եւ տաճարին». — Հնոց և Նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 28–29։

Վանքը աւերակ կը դառնայ 1916ին, թշնամիներու կողմէ կը քանդուին զանգակատուն, գաւթին, և տաճարին գմբէթները, կը խորտակուին Թարգմանիչ Վարդապետներու խաչարձանները, կ'աւերուին միաբաններու և ուխտաւորներու սենեակները. — Արարատ, 1916, էջ 581։

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Առաքելոց Վանքի մշակութային գործունէութեան մասին քիչ են տեղեկութիւններ։ Անդ օրինակուած գրչագիրներէն փոքր մաս մը միայն հասած է մեզի. Այսպէս.

Ա. — Վարդան Քահանայ Կարնեցի, Դպիր եւ Ծաղկող, 1204–5ին կ'օրինակէ մեծ Տօնական մը, միջին երկաթագրով. և գեղեցկօրէն կը ծաղկէ, Բաբերդցի Աստուածատուրի պատուէրով. — Հ. Բ. Սարգիսեան, Ցուցակ Ձեռ. Վեննայի, Բ., էջ 471–7։ Հայապատում, էջ 448։ Յիշատ. Ձեռագրաց, էջ 699–726։

Բ. — Բարսեղ Դպիր, 1275ին օրինակած է մասամբ, Մեկնութիւն Հնգամատենի, Փիլոնի, Տարօնեցի Ներսէս Վարդապետի համար. — Յովսէփեան, Խաղբակեանք, Բ., էջ 194–5։

Գ. — Առաքել Քահանայ, Դպիր, 1312–14. — Ղազարու Վանքին մէջ կ'օրինակէ.

1. — Աւետարան, 1312ին, Ներսէս քահանային համար. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1949։ A. Tchobanian, La Roseraie d'Arménie, Tome II., 315:

2. — Աւետարան, 1314ին, Թումայ քահանայի խնդրանքով. — Խաչիկեան, Յիշատ. ԺԴ. Դարի, էջ 105։

Դ. — Յովհաննէս Նկարիչ, 1312ին ծաղկած է Առաքել երէցի օրինակած Աւետարանը. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1949։

Ե. — Ստեփանոս Կրօնաւոր, Դպիր, օրինակած է Աւետարան մը, 1339ին։ Յիշատակարանին մէջ կան սա ուշագրաւ տողերը. «Արդ ... յիշեսջիք զգրող սորա ... որ զայս մագաղաթս ի չահ ածի։ Զի յառաջն Աւետարան էր, և անկեալ էր ի ձեռս այլազգեաց, և թուղթ թուղթ էր արած, ես լուացի զինքս ու շատ աշխատեցայ, այնոր համար որ զգիրն դժար կու տանէր ...»։ Խաչիկեան, Յիշատ. ԺԴ. Դարի, էջ 321։

Զ. — Աստուածատուր Աբեղայ, Դպիր եւ կազմող, 1540–73. — Ղազարու Վանքին մէջ օրինակած է.

1. — Սաղմոս, 1540ին, Դաւիթ քահանայի խնդրանքով. «Ի յընտիր աւրինակէ ի Գառնեցւոյ». — Սրուանձտեանց, Թ. Աղբար, Բ., էջ 421–3։

2. — Աւետարան, 1573, Մատթէոսի գլուխը միայն. Մնացեալը շարունակած է Խառաբաստայ Վանքին մէջ. «Ի Հայրապետութեան Տէր Գրիգորիսի Նորընծայ Կաթողիկոսի». — Ե. Լալայեան, Ցուցակ Ձեռ. Վասպուրականի, էջ 677։

Է. — Գրիգոր Դպիր Նչեցի, որդի Ստեփանոս Քահանայի, 1621ին օրինակած է մէկ ժողովածոյ, որուն առաջին գլուխն է Աղօթագիրք Ս. Տեղեաց, Վարդան Վարդապետի (1321). — Ձեռ. Ս. Յ. Թ. 939։ Աղաւնունի, Միաբանք, էջ 503։

Ը. — Կարապետ Վրդ. Դպիր, հոգեւոր որդի Ամթեցի Բարսեղ Վարդապետի, որուն պատուէրով կը ձեռնարկէ օրինակելու մէկ Մեկն. Թղթոց Պաւղոսի, Անանիա Սանահնեցւոյ, և կ'աւարտէ Եղիազարու Վանքին մէջ, 1625ին. — Հանդ. Ամս. 1956, էջ 441–2։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@